ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ GES_

Ք. Երևան **01.2024թ.**

«ԳԷՍ ԷՅԷՄ» ՍՊԸ՝ ՀՎՀՀ 01041371 (այսուհետ՝ Մատակարար), ի դեմս տնօրեն՝ ------, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ------(այսուհետ՝ Գնորդ), մյուս կողմից (Մատակարարը և Գնորդը միասին այսուհետև Կողմեր) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Պայմանագրով Մատակարարը պարտավորվում է Գնորդին մատակարարել սույն պայմանագրի N2 հավելվածին համապատասխանող ---- մակնիշի 1(մեկ) հատ ավտոմեքենա (այսուհետ՝ Ավտոմեքենա), իսկ Գնորդը պարտավորվում է վճարել դրա դիմաց:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

2.1.Մատակարարը պարտավոր է՝

2.1.1. Սույն պայմանագրի N2 հավելված հանդիսացող հաշվին համապատասխանող --- մակնիշի 1(մեկ) հատ Ավտոմեքենան Գնորդին հանձնել սույն պայմանագիրը Մատակարարի և Գնորդի կողմից ստորագրելու օրվանից -- (--) աշխատանքային օրվա ընթացքում:

2.1.2. Սույն պայմանագրի N2 հավելված հանդիսացող հաշվին համապատասխանող --- մակնիշի 1(մեկ) հատ ավտոմեքենան Գնորդին հանձնելիս միաժամանակ Գնորդին հանձնել նաև Ավտոմքենայի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.1.3. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ավտոմեքենա:

2.1.4. Սույն պայմանագրի 2.2.1. կետում նշված -- (----) աշխատանքային օրվա ժամկետում N2 հավելված հանդիսացող հաշվին համապատասխանող --- մակնիշի 1(մեկ) հատ ավտոմեքենան Գնորդին չհանձնելու դեպքում, այդ ժամկետը լրանալուց հետո 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացում Գնորդին վերադարձնել գնորդի վճարած Ավտոմեքենայի գնի 100 % չափով:

2.2. Գնորդն իրավունք ունի՝

2.2.1. Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, եթե Մատակարարը հրաժարվում է Գնորդին հանձնել սույն պայմանագրի N2 հավելված հանդիսացող հաշվին համապատասխանող --- մակնիշի Ավտոմեքենա և Մատակարարից պահանջել վերադարձնելու վճարված ամբողջ գումարը:

2.2.2. Ավտոմեքենայի վերացվող թերությունների առկայության դեպքում ՝ հրաժարվել ավտոմեքենայից կամ Մատակարարից պահանջել.

Ա) համաչափ պակասեցնել Ավտոմեքենայի գինը և վերադարձնել համաչափ պակասեցված գնի չափով գումարը,

Բ) պահանջել ողջամիտ ժամկետում անհատույց վերացնել Ավտոմեքենայի վերացվող թերությունները,

Գ) հատուցել ավտոմեքենայի վերացվող թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը:

2.2.3. Մատակարարի կողմից սույն պայմանագրի N2 հավելված հանդիսացող հաշվին ոչ համապատասխան կոմպլեկտավորմամբ ավտոմեքենա հանձնելու դեպքում, պահանջել համաչափ պակասեցնելու ավտոմեքենայի գինը կամ ողջամիտ ժամկետում կոմպլեկտավորել ավտոմեքենան,

2.2.4.Ավտոմեքենան կոմպլեկտավորելու պահանջը 5(հինգ) օրացույցային օրվա ընթացքում Մատակարարի կողմից չկատարվելու դեպքում՝

Ա) պահանջել փոխարինելու անկոմպլեկտ Ավտոմեքենան կոմպլեկտավորված Ավտոմեքենայով.

Բ) հրաժարվել սույն պայմանագրից և պահանջել վերադարձնել վճարված ամբողջ գումարը:

2.3. Գնորդը պատրավոր է՝

2.3.1.Սույն պայմանագիրը ստորագրելու օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Մատակարարի տված համապատասխան փաստաթղթի հիման վրա կատարել սույն պայմանագրի N2 հավելված հանդիսացող հաշվին նշված Ավտոմեքենայի գնի համապատասխան չափը և N1 հավելված հանդիսացող «Պատվեր-հայտ»-ում ներկայացված մատակարարման ծառայության համապատասխան չափը ըստ վճարման պայմանի:

2.3.2. Ավտոմեքենան Մատակարարից հանձնման-ընդունման ակտով ստանալուց հետո 2(երկու) աշխատանքային օրվա ընթացքում Մատակարարին գրավոր տեղեկացնել Ավտոմեքենայի սույն պայմանագրի N2 հավելված հանդիսացող հաշվին չհամապատասխանելու մասին՝ Ավտոմեքենայի աշխատանքի և կոմպլեկտավորվածության վերաբերյալ, նշելով կոնկրետ անհամապատասխանությունները, անսարքությունները և թերությունները՝ դրանց առկայության դեպքում:

2.3.3. Ընդունել Մատակարարի սույն պայմանագրի N2 հավելված հանդիսացող հաշվին համապատասխան Ավտոմեքենան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ըստ սույն պայմանագրի իրավունք ունի պահանջել փոխարինելու ավտոմեքենան կամ հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց:

2.3.4. Ավտոմեքենան Գնորդին հանձնելուն պատրաստ լինելու մասին Մատակարարի տեղեկացում-հրավերը ստանալուց հետո 3(երեք) աշխատանքային օրվա ժամկետում ներկայանալ Մատակարարին Ավտոմեքենան և պատկանելիքները ստանալու և սույն պայմանագրի N3 հավելվածով նախատեսված Ավտոմեքենայի հանձնման-ընդունման ակտը կազմելու համար:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1. Սույն Պայմանագրի արժեքը կազմում է սույն պայմանագրի N1 հավելված հանդիսացող «Պատվեր-հայտ»-ում նշված Ավտոմեքենայի գինը ---- USD և մատակարարման ծառայության գինը ---- USD համարժեք ՀՀ Դրամ:

3.2. Մատակարարի և Գնորդի փոխադարձ համաձայնության դեպքում սույն պայմանագրի 3.1 կետում ներկայացված գումարը Գնորդը վճարում է.

3.2.1. Առաջին փոխանցումը կատարել անկանխիկ եղանակով Մատակարարի կողմից տրամադրված N2 Հավելված ավտոմեքենայի ձեռքբերման հաշիվը օտարերկրյա գործընկերոջ բանկային հաշվին սույն պայմանագիրը ստորագրելու օրվանից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում: Երկրորդ փոխանցումը կատարել Մատակարարի բանկային հաշվին անկանխիկ եղանակով, Մատակարարի կողմից տրամադրված հաշվի հիման վրա պայմանագիրը կնքելու օրվանից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Սույն պայմանագրի 3.1. կետում նշված գումարները 3.2.1 կետում նշված ժամկետում Գնորդի կողմից վճարումը չկատարելու դեպքում վճարման յուրաքանչյուր ուշացած օրվա համար Գնորդը վճարում է տուգանք վճարման ենթակա գումարի 1(մեկ) տոկոսի չափով:

3.4. Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը անփոփոխ է բացառությամբ մատակարարման ընթացքում առաջ եկած այնպիսի անհամապատասխանությունների, ինչպիսիք են՝ պետական մարմինների ակտեր կամ օրենքներ, բեռնափոխադրման սակագնի էական տատանումները, որոնց առկայության դեպքում անհնարին են դարձնում պայմանագրի սկզբնական ձևով կատարումը և որոնց հիմքը ներկայացված են համապատասխան փաստաթղերով:

3.5. Սույն Պայմանագրի վճարման արժույթն է ՀՀ դրամ:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

4.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 2(երկու) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Սույն պայմանագիրից ծագած վեճերը լուծվում են Մատակարարի և Գնորդի միջև բանակցությունների միջոցով:

5.2 Սույն պայմանագրի վերաբերյալ վեճերը, որոնք հնարավոր չէ լուծել բանակցությունների միջոցով՝ ենթակա են լուծման դատական կարգով:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Մատակարարի և Գնորդի ստորագրելու պահից:

6.2. Սույն պայմանագիրը համարվում է կատարված սույն պայմանագրի N3 հավելվածով նախատեսված Մատակարարի և Գնորդի միջև Ավտոմեքենայի հանձնման-ընդման ակտը Մատակարարի և Գնորդի կողմից ստորագրելու պահից:

6.3. Սույն Պայմանագրում կատարվող փոփոխություններ և լրացումները կատարվում են լրացուցիչ համաձայնագրով, որը ստորագրվում է Մատակարարի և Գնորդի կամ նրանց կողմից լիազորված անձանց կողմից: Սույն պայմանագրի հավելվածները, լրացուցիչ համաձայնագրերը հանդիսանում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

6.4. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով հավասարազոր երկու օրինակից և Մատակարարի և Գնորդի տրվում է մեկական օրինակ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՌԵԿՎԻԶԻՏՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՄԱՏԱԿԱՐԱՐ
_____	_____
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1

Ավտոմեքենայի վաճառքի

պայմանագրի

ՊԱՏՎԵՐ ՀԱՅՏ

Գնորդ	
Մատակարար	«ԳԷՍ ԷՅԷՄ» ՍՊԸ, ՀՎՀՀ՝ 01041371
	Իրավաբանական հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ վ/շ, Մարգարյան 37
Գնման առարկան	Ավտոմեքենա՝ Մակնիշը ---- Արտադրությունը 2---- թվական Գույնը ---- ---- ---- ----
Մատակարարման ժամկետը	.2024թ. մինչև.2024թ. (---աշխատանքային օր)
Գնման առարկայի արժեքը	Ավտոմեքենայի գինը --- USD, որի համար փոխանցումը կատարվում պայմանագիրը ստորագրման օրվանից 2 աշխատանքային օրվա ընթացքում N2 հավելվածում ներկայացված հաշվի հիման վրա:
Մատակարարման արժեքը	Մատակարարման արժեքը կազմում է --- USD համարժեք ՀՀ Դրամ, արժեքը ներառում վաճառողի պահեստից մինչև Երևան բոլոր ծախսերը: Մատակարարման համար վճարումը կատարվում է պայմանագիրը կնքելու օրվանից 2 աշխատանքային օրվա, մատակարարի բանկի կողմից առաջարկված օրվա փոխարժեքով:

ԳՆՈՐԴ

_____

Կ.Տ.

ՄԱՏԱԿԱՐԱՐ

_____

Կ.Տ.

Հավելված N 2

Ավտոմեքենայի վաճառքի
պայմանագրի

GES